Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գավառի թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Թեմա՝ Ներառական կրթություն

Ուսուցիչ՝ Իրանուհի Խաչիկյան

Մենթոր՝ Գոհար Շահինյան

Գավառ 2023

Բովանդակություն

1. Նախաբան_____3
2. Ներածություն _____4
3. Ներառական կրթության եզրույթների բառարան_____6
4. ՈՒսումնառության համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը_____7
5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և ԱՈՒՊ-ներ_____10
6. Ուսուցչի դերը ներառական կրթության մեջ և մասնագիտական մոտեցումները_____ 12
7. Ընտանիքի դերը ներառական կրթության մեջ__ _____ 14
8. Եզրակացություն_____16
9. Գրականության ցանկ_____17

Նախաբան

- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան: Այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում և պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պատասխանատվության ու վերահսկողության տակ է:
- Ցավոք, բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել՝ Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից: Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:
- Հատուկ և հանրակրթական դպրոցների միջև առկա պատնեշը տարիների ընթացքում աստիճանաբար կկորցնի իր արդիականությունը դպրոցական համակարգի համար, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կստանձնի իր կարևոր դերը բոլոր երեխաներին անհրաժեշտ ծառայություններ մատուցելու նպատակով: Մասնագիտական տեսանկյունից դա կապահովի դասավանդման որակի բարելավում, երբ տարբեր բնագավառների մանկավարժների փորձառությունն ու մոտեցումները հնարավոր կլինի ինտեգրել:
- Աշակերտի և նրա կրթության համար արդեն պատասխանատվություն կրում է հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատու է, որ դպրոցի ծրագրերն ու դպրոցը մատչելի լինեն բոլոր երեխաների համար, հաշվի առնեն երեխաների կարիքները, պարբերաբար վերամշակվեն, իրականանան և գնահատվեն: Նման ծրագրերի և դրանց գնահատման արդյունքները կխթանեն դասավանդման նոր մոտեցումներ և ծրագրեր: Այն փաստը, որ ուսուցիչները համատեղ ուժերով, համատեղ քննարկմամբ առաջարկում են մեթոդներ ու լուծումներ դասավանդման կոնկրետ խնդրի հաղթահարման, կոնկրետ աշակերտի կարիքներին համապատասխան ուսուցումը կազմակերպելու համար, կարևոր մաս է կազմում դասավանդման որակը բարելավելու գործընթացում:
- Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում, ընտանիքի մասնակցությունը համարվում է անփոխարինելի պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքի անդամները կարող են կարևոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն և հավատ ներշնչվի, և ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու և ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում:
- Ամբողջ կրթության նպատակը պետք է ուղղված լինի անհատի կարիքներին, և շատ կարևոր է, որպեսզի գնահատման ռազմավարությունը մշակված լինի առաջընթացի գնահատումը խթանելու նպատակով: Գնահատումը պետք է ուղղված լինի դրական զարգացումները բացահայտմանը:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության ճիշարավորության և որակի ապահովմանը: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթությունը նաև հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները: Կրթության իրավունքը համընդհանուր է և պետք է ներառի բոլոր երեխաներին, երիտասարդներին ու մեծահասակներին, որոնք ունեն հաշմանդամություն: Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը, որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների կոնվենցիան» և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը»: 1994թ. աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստորագրված «Սալամանկայի հռչակագիրը» սահմանեց, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթության հիմնարար իրավունք: Համաձայն այս հռչակագրի, կրթական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: Ներառական կրթության գաղափարը Հայաստանում տեղ գտավ հռչակագրի ստորագրումից 11 տարի անց՝ 2005թ., երբ ընդունվեց համապատասխան օրենքը

Ներառական կրթության նպատակները կիրականացվեն այն ժամանակ, երբ բոլոր պետությունները ճանաչեն, որ կրթության համընդհանուր իրավունքը պետք է ներառի հաշմանդամություն ունեցող մարդկանց և իրականացնեն իրենց պարտավորությունը: Սա վերաբերում է զարգացող և զարգացած երկրների կառավարություններին, և պետք է ներառի բոլոր կառավարական մարմինները՝ սկսած դպրոցից որոնք պատասխանատու են հանրային կրթական համակարգերի, ինչպես նաև միջազգային զարգացման ու աջակցության ծրագրերի և գերակայությունների մշակմանն ու իրականացմանը:

Ըստ միջազգային գործակալությունների գնահատականների՝ մեզ հայտնի է հետևյալը..զարգացող երկրներում հաշմանդամ երեխաների 98%-ը դպրոց չի հաճախում:

.յուրաքանչյուր տարի 500.000 երեխա վնասում է իր տեսողությունը A վիտամինի անբավարարության պատճառով:

.յուրաքանչյուր տարի 41 միլիոն երեխա ծնվում է մտավոր անբավարար զարգացման ռիսկով՝ մոր սննդակազմում յոդի անբավարարության պատճառով:

.զինված ընդհարումներումների ժամանակ, ամենաքիչը երեք երեխա վիրավորվում և հաշմանդամ է դառնում: Յուրաքանչյուր տարի ականներից զոհված ու վիրավորված 26 000 մարդկանցից 40%-ը երեխաներ են: Ավելի քան 10 միլիոն երեխա հոգեբանական տրավմայի է ենթարկվում զինված հակամարտությունների պատճառով:

.երեխաների շահագործումը, ինչպես օրինակ մարմնական պատիժները, անդամահատումը, ազատազրկումը, պատճառ են դառնում մանկական հաշմանդամության, հոգեկան հիվանդությունների, ֆիզիկական ու հոգեբանական հաշմանդության, դպրոցում կամ աշխատանքում դժվարությունների և այլն /ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ, 2002թ./:



Ներառական կրթության եզրույթների բառարան

Ներառական կրթություն - յուրաքանչյուր երեխայի այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումը:

Հատուկ հանրակրթական դպրոց - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև՝ հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ: Կրթության առանձնահատուկ պայմաններ - անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ - ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ - ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին: Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն - երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում - անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների ամբողջությունը: Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ - Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

Անհատական ուսուցման պլան - հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված 1 Հասկացությունների և եզրույթների մեծ մասը վերցված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից: 5 փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

Ուսուցչի օգնական - կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող: Մանկավարժական աշխատող - սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև՝ մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից:

Ուսուցանող գնահատում - սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացը, ինչպես նաև՝ հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը: Հայտորոշում - դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ

Զարգացման մոտակա գոտի - գործողությունների շրջանակ, որտեղ սովորողը կարողանում է կատարել օգնությամբ: Համագործակցային ուսուցում/ ուսումնառություն - Դասավանդման համակարգված, կանոնակարգված ռազմավարություն, որի դեպքում սովորողների փոքր խմբերը համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ խնդրի լուծման համար:

Փոխներգործուն մեթոդ – Փոխներգործուն մեթոդը ենթադրում է սովորողների ավելի ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ, ինչպես նաև՝ ուսուցման գործընթացում սովորողի ակտիվության գերկայություն: Ուսուցման մեթոդ - Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Հաշմանդամություն- առողջական խնդիրներ ունեցող անձանց ու շրջակա միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք, որը խոչընդոտում է նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը: Հաշմանդամություն ունեցող անձ- Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, որոնք երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով:

Եզրույթների մեծ մասը վերցված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից:

ՈՒսումնառության համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը

Ներառման գործում ՈՒՀԶ-ի կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմազանության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: : Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու երևան են բերվում նրա ռեսուրսները և ներուժը: Խորհրդային տարիներին ենթադրվում էր, որ բոլոր մարդիկ իրար նման են¦, կատարյալ, գեղեցիկ, առանց խնդիրների: Բոլոր նրանք, ովքեր չէին բավարարում այս չափանիշներին (ունեին տեսողական, լսողական, ֆիզիկական, մտավոր, նույնիսկ խոսքի և հաղորդակցման խնդիրներ), մեծանում էին հատուկ գիշերօթիկ հաստատություններում, իրենց ընտանիքներից ու հասարակությունից առանձնացված: Այսօր Հայաստանում գնալով ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը, և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները, նրանց մոտ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է դասավանդման որոշակի մոտեցման կիրառման դեպքում (Vygotsky, 1962): ՈՒՀԶ-ը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող աշակերտներ: ՈՒՀԶ-ը հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են նորմալ¦ և ոչ նորմալ, կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (Rose & Meyer, 2005):

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են **ուսուցման երեք տեսակների վրա**՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական**:**
Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը: Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին:
Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա արձագանքել հասկացությանը: Ոսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանելու միջոցով:
Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային: Առանց մոտիվացիայի սովորողների կողմից յուրացումը ավելի մակերեսային է (Clampa, 2014; Malone & Lepper, 1987; Mega, Ronconi & DeBeni, 2014):
ՈՒՀԶ-ն ունի երեք հիմնական սկզբունքներ, որոնք ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը պլանավորելու սովորողների կարիքներին համապատասխան: ՈՒՀԶ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը ողջունում է սովորողների տարբերությունները: Ուսուցիչները կարող են բարելավել իրարից տարբեր սովորողների ուսումնառությունը՝ ճանաչողական, ռազմավարական և բազմազան հնարավորություններ ստեղծելով: Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի կողմից դասախոսություն կարդալու, սովորողների կողմից նշումներ կատարելու (դասախոսությունը գրի առնելու) և վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը: Դասախոսության, նշումների, քննության մեթոդը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել: Ավանդական մոտեցումը կարող է նաև խոչընդոտներ առաջացնել այն աշակերտների համար, ովքեր ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում: Դասախոսությունները, նշումները և քննությունը կարող են լինել համընդհանուր ձևավորման մասը, սակայն դրանք դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են: ՈՒՀԶ-ի երեք սկզբունքները հետևյալն են՝
1. Ճանաչողական ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ:
2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ:
3. Հուզական ուսուցման օժանդակում՝ ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառմամբ:
Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՈՒՀԶ ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում: Օրինակ, վերևում նկարագրված՝ գրքի ընթերցումը մոտիվացնող մոտեցումը կարող է դիտարկվել ինչպես հուզական, այնպես էլ ռազմավարական ուսումնառության տարբերակ: Ստորև կներկայացնենք ուսուցիչների կողմից նյութի մատուցման, աշակերտների կողմից նյութի վերարտադրման (արտահայտվելու) և դասապրոցեսում աշակերտների ներգրավման բազմազան մոտեցումների կոնկրետ օրինակներ

https://www.youtube.com/watch?v=OxMmIGFhG9M

Դասարանում համընդ
հանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողներին՝ որպես §սովորական¦ ու §առանձնահատուկ¦ երեխաների տարբերակումը վերացնելուն, ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Միաժամանակ, համընդհանուր ձևավորումը ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես §լավ դասավանդումը¦: Ըստ Էդիբերնի (2010), համընդհանուր ձևավորումը ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և, միաժամանակ, անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխանող դասարան: Սակայն, երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին, ՈՒՀՁ-Ý կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար: Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև: Ուսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին: Միևնույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի (Միավորված ազգեր, 2006) առավել լայն փիլիսոփայությանը: Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովելու մատչելիություն բոլորի համար: Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար, մյուսների հետ հավասար հիմունքներով, ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են և տրամադրվում են հանրությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում, բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության բազմազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին՝ սովորածը վերարտադրելիս և դասապրոցեսում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել պայմանների բարելավում լսողության խանգարում ունեցող սովորողի համար, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով՝ ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և ԱՈՒՊ-ներ



Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն (այսուհետ՝ Գնահատում) իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝ 1) երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ, 10 2) ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը, 3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը: Երեխայի Գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ, ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ նկատվում են կայուն դժվարություններ: Գնահատումն իրականացվում է երկու փուլով. 1) դպրոցական մակարդակի Գնահատում, 2) տարածքային մակարդակի Գնահատում: Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում: Գնահատումը մասնակցային գործընթաց է, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը, աջակցության խումբը, երեխայի ուսուցիչները: Գնահատումն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում:

Անհատական ուսուցման և զարգացման պլանը (ԱՈՒԶՊ) երեխայի կարիքի և առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝ նաև ՄՀ աջակցող ծառայությունները) և ժամկետները՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի և կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները երեխայի համար հասանելի դարձնելու համար: ԱՈՒԶՊ-ը մշակում են ուսումնական հաստատությունը և ՏՄԱԿ-ը տարածքային մակարդակի գնահատման արդյունքում ԿԶԱՊԿ ունեցող յուրաքանչյուր երեխայի համար. այն մշակվում է մեկ ուսումնական տարվա համար: /ԿԳՄՍ/

ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սոովորողի կրթության հիմքն է: Ուսուցիչներից շատերը ծանրաբեռնվածության և անհանգստության զգացողություն են ունենում ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացների ժամանակ: Այնուամենայնիվ, ուսուցիչները ԱՈՒՊ-ի մշակման թիմի հիմնական մասն են կազմում: Դուք՝ որպես ուսուցիչ, ոչ միայն օգնում եք դասարանում սովորողի առաջընթացի գրանցմանը և նպաստում ուսուցման գործընթացում նրա մասնակցության բարելավմանը, այլև արժեքավոր ներդրում եք ունենում այն պլանի մշակման ժամանակ, որը կօգնի մեզ և սովորողին հաջողության հասնել հանրակրթության ծրագրերում: ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով գնահատվել ու ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Նրանք չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի պատճառները հետևյալ խանգարումներն են.

- Ձայնի և խոսքի,
- Տեսողության,
- Լսողության,
- Ինտելեկտուալ (մտավոր)

, • Շարժողական

ԱՈՒՊ-ում նախանշված կրթական ծառայությունները մատուցվում են սովորական դասարաններում՝ դասերի ժամանակ ուսուցիչների կողմից, իսկ մասնագիտական ծառայությունները՝ ռեսուրս սենյակներում մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կողմից: Այլ դեպքերում ԱՈՒՊով նախատեսված մասնագիտական ծառայությունները ծնողի համաձայնությամբ կարող են մատուցվել նաև տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում՝ կախված սովորողների կարիքներից կամ դպրոցի ռեսուրսներից: Որոշ սովորողներ կարող են ունենալ ԱՈՒՊ միայն մեկ առարկայի համար, իսկ մյուսները, բացի մասնագիտական ծառայություններից, կարող են ունենալ ԱՈՒՊ ակադեմիական բոլոր առարկաների համար: Կարող են լինել նաև սովորողներ, որոնց համար ԱՈՒՊ-ում որևէ առարկայական ծրագիր չի հարմարեցվի (ֆիզիկական դժվարություններ կամ միջավայրային հարմարեցումների կարիք ունեցող սովորողներ), քանի որ սովորողը հաջողությամբ յուրացնում է իր դասարանի բոլոր առարկայական ծրագրերը՝ առանց որևէ ծրագրային, բովանդակային հարմարեցումների, սակայն այս սովորողների ԱՈՒՊ-ներում կպլանավորվեն և կնախանշվեն անհրաժեշտ միջավայրային հարմարեցումները: ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում երեխայի դասավանդող ուսուցիչը կարևոր դերակատարում ունի դպրոցում գիտելիքների յուրացման, հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում:

• Համագործակցեք մանկավարժահոգեբանական աջակցող մասնագետների հետ: Ուսուցիչներին անհրաժեշտ են հմտություններ՝ ԱՈՒՊ-ում նպատակներ սահմանելու և իրենց դասերի ժամանակ դրանք արդյունավետ իրականացնելու հարցում: Մասնագետները սերտորեն համագործակցում են ուսուցիչների հետ մշակված ԱՈՒՊ-ը դասարանում գործողությունների վերածելու հարցում:

• Գնահատել ԱՈՒՊ-ը: Ուսումնական տարվա ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի գնահատում հաճախ է իրականացվում (ընթացիկ, կիսամակային, տարեկան) համոզվելու համար, որ սովորողը հասնում է ԱՈՒՊ-ում դրված նպատակներին: ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներն ու նպատակադրումները ցանկացած պահի կարող են փոփոխվել՝ ըստ անհրաժեշտության:

ԱՈՒՊ-ի նմոշ- օրինակ

2. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի ուժեղ կողմերը՝

Ըստ ուսուցչի

_____

_____

Ըստ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի

_____

_____

Ըստ ծնողի

_____

_____

Ըստ սովորողի

_____

_____

2.2 Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի թույլ կողմերը՝

Ըստ ուսուցչի _____

Ըստ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի

_____

_____

Ըստ ծնողի

_____

Ուսուցչի դերը ներառական կրթության մեջ և մասնագիտական մոտեցումները

Ֆլորիանը և Ռուսը (2008) պնդել են, որ "Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է պատրաստել մարդկանց մուտք գործել մասնագիտություն, որը պահանջում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն բարելավելու բոլոր երեխաների ուսուցումը և մասնակցությունը" (էջ 556): Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է, որ հանրակրթական դասարանի ուսուցիչը ունի որոշակի գիտելիքներ և պատկերացում տարբեր ունակություններով և կարողություններով սովորողների կարիքների մասին, 8 ծանոթ է կրթական մեթոդներին և ուսումնական պլանների ռազմավարությանը: Այս տեսանկյունից ուսուցիչը կարևորագույն դեր է խաղում կրթության որակի ապահովման հարցում և, միաժամանակ, ուսուցչի որակը ամենից շատ պայմանավորում է սովորողի հաջողությունը, քան որևէ այլ գործոն՝ ներառյալ դասարանի միջավայրային պայմանները: Ամենուրեք ներառական կրթությունը հատուկ կարիքներով երեխաների համար առավել նախընտրելի մոտեցումն է: Պարզ է, որ հատուկ կարիքներով երեխաները պետք է կրթություն ստանան հանրակրթական կառույցներում՝ առավելագույնս իրենց ունակություններին և կարողություններին համապատասխան, և չպետք է մեկուսացվեն հատուկ դպրոցում, քանզի կրությունը այնտեղ չի կարող առաջընթաց ապահովել՝ անգամ բոլոր համապատասխան նյութերով, մեթոդներով և ծառայություններով հաջեցալ լինելու պարագայում /Ալլեն և Ծվարց, 2001/: Այս շրջանակներում ուսուցիչների դերն է ոգևորել հատուկ կարիքներով սովորողներին ընտրություն կատարել ինչքան հնարավոր է հաճախ, լինել ազատ, սովորել իրենց իսկ միջավայրում և հաջողություններ ունենալ: Ուսուցիչները խթանում են ուսումնական գործընթացը՝ ուղղորդելով, ոգևորելով, համագործակցելով և փորձելով՝ կիրառելով ուսուցման բազմակի մեթոդներ, որոնք նախատեսված են տարբեր ուսումնական ոճերի համար և հեշտացնում են ընտրություն կատարելու կարողությունը աշակերտի կողմից և ինքնուրույն գործելու ունակությունը: Ինչևէ, ներառական դպրոցում հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող ուսուցիչների պատրաստումը և օժանդակումը կարծես թե փոփոխություններ է ապրում:

Այսօր արդեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների մասնագետները նշում են այնփաստը, որ հանրակրթական դպրոցներում հնարավորություն ունեն սովորելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները և անքննելի է այն տեսակետը, որ հանրակրթական դպրոցներում նրանց ներգրավվածությունը բերում է ունեցած հնարավորությունների անասելի մեծ առաջընթացի, քան ենթադրվում էր մի քանի տարի առաջ: Ներկայումս գոյություն ունեցող փաստերը ավելի լավ են հիմնավորում իրավիճակը, օրինակ անհատական ուսումնական պլան /ԱՈՒՊ/ կազմելիս, կրթական այն խնդիրներն ու նպատակները, որ տարեսկզբին դրվում էին մասնագետի առջև, արդեն իսկ տարեկեսին անպայման որոշակի առաջընթաց են ունենում, քանի որ շատ դեպքերում երեխաների առաջընթացը և ցուցաբերած ակտիվությունը առկա կանխատեսումներից ավելին է լինում: Որպես կանոն սա պայմանավորվում է մի քանի գործոններով.

· կրթական
· սոցիալական
· հոգեբանական

Առաջնային դերերից մեկը սոցիալական համագործակցությանն է, քանի որ սովորելով հանրակրթական միջավայրում՝ ԿԱՊԿՈՒ երեխաները հնարավորություններ են ունենում ներգրավվել ուսումնական տարբեր գործունեություններում, տեսնել և զգալ դասընկերների կարողություններն ու հմտությունները, և կամա թե ակամա ձգտումներ ունենալ: Այս երեխաները հնարավորություն են ունենում իրենց տարեկիցներից և համադասարանցիներից տեսնել, լսել և սովորել ոչ միայն ճանաչողական գիտելիքներ, այլև սոցիալական, հաղորդակցական, վարվեցողության շատ հմտություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն առօրյա կյանքում: Այսօր նրանցից շատերը ապահովում են պետական չափորոշչի գիտելիքների համակարգի, ինչպես նաև կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի երկրորդ մակարդակի պահանջները, որը իրենից բավականին զգալի ցուցանիշ է ներկայացնում: Վերջին 2-3 տարիների ընթացքում աշակերտների սոցիալական ներգրավվածությունը հասել է նրան, որ 10 նրանք ընդգրկվում են ինչպես անհատական, այնպես էլ զույգերով, խմբային, խաղային գործունեության մեջ՝ պահպանելով այդ գործունեությունների պահանջները, ազատ շփումը, համագործակցությունը, պատասխան տալու կարողությունը: Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության զարգացման արդյունետությունը, ըստ ՛՛Կրթություն Բոլորի համար՛՛ ծրագրի ի սկզբանե իր զարգացման ընթացքում ուներ բացթողումներ և հապճեպություն, քանի որ առաջին իսկ օրվանից այն դժգոհությունների և խուճապի պատճառ հանդիսացավ: Սակայն, այսօր արդեն, մի քանի տարի անց, ներառական կրթությունն ունի մասսայականություն և հանդիսանում է հասարակության հումանիզմի լավագույն դաստիարակության մեթոդ: Սակայն, այդուհանդերձ, ներառական կրթությունը ամբողջ աշխարհում դեռ ունի անցնելու զարգացման երկարատև ճանապարհ, և մեր երկրում այն բավականին բարդ ու դժվար է ընթանում, քանզի ունի չմշակված և չհարմարեցված մեթոդաբանություն, գնահատման համակարգ, թերի պատրաստված մասնագետներ և մասնագիտական որակը չկարևորող տնօրեններ: Ըստ մասնագետների կարծիքի, ներառական կրթության զարգացման արդյունավետությունը կարելի է կապել ոլորտում աշխատող յուրաքանչյուր մարդու բարեխիղճ մոտեցման և գրագետ լուծումների հայթայթման հետ: Կարևոր է և անհրաժեշտ.

· ՁԼՄ-ների միջոցով գրագետ և հաճախակի լուսաբանումները,
· ադապտացված մեթոդաբանություն
, · մասնագետների վերապատրատումները
· դպրոցներում ողջ անձնակազմի խորքային վերապատրաստումները,
· հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ վերապատրաստումները և խորհրդատվությունը,
· համապատասխան մասնագետների ընդգրկումը ներառական կրթություն իրականցնող դպրոցներում,
· դասարաններում աշակերտների քանակի նվազեցումը,

Ընտանիքի դերը ներառական կրթության մեջ

Երեխայի ընտանիքը որոշիչ դեր ունի ներառական կրթության իրականացման գործընթացում, քանի որ մասնակից է երեխայի փոխադրմանը տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց: Ուստի հարց է առաջանում, թե ինչու է ծնողների դերը հաճախ աննկատ մնում երեխաների կրթության գործընթացում: Պատմականորեն շատ երկրներում ընտանիքը կարծես դուրս է մնացել երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմից՝ հիմնականում ստանձնելով մասնագիտական կարծիք լսողի դերը: Նույն իրավիճակը եղել է նաև Հայաստանում, որտեղ ծնողների և մասնագետների երկխոսությունը հաճախ շարունակում է առավել ավանդական և հիերարխիկ բնույթ կրել: Ծնողները կամ ընտանիքի անդամ-ները հիմնականում ներկայանում են հանդիպումների թեստերի արդյունքներին ծանոթանալու կամ իրենց երեխային վերաբերող արդեն իսկ կայացրած որոշումները լսելու համար: Դպրոցը, որպես կանոն, ծնողների հետ կապվում է, երբ նրանցից որ- ևէ բան է հարկավոր կամ երբ ինչոր բան է պատահել: Ընտանիքների դերի փոփոխությունը պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից ակտիվ մասնակցի վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշա- կերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Դա կարևոր է, քանի որ ընտանիքն առավել համընդգրկուն տեղեկատվություն է ստանում երեխայի մասին և իմանում է ավելին, քան վկայում են թեստերի արդյունքներն ու գնահատականները: Ընտանիքների մեծ մասը գիտակցում է երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն հիմնականում մ-նում է որպես պասիվ ռեսուրս՝ չունենալով իր ներդրում-ն այս գործընթացում:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընտանիքների և մասնագետների առաջին հանդիպումը տեղի է ունենում մանկավարժահոգեբանական գնահատման ժամանակ: Ընտանիքներն այս թիմի անդամ-ներն են և մասնակցում են քննարկում-ներին, խորհրդակցություններին, հանդիպում-ներին և դասընթացներին: Ցավոք, նե- րառական կրթության համատեքստում մանկավարժներն ու ընտանիքի անդամ-ները համագործակցության անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ չունեն: Մինչդեռ այդ համագործակցությունն էական նշանակություն ունի երեխայի կրթության արդյունավետության տեսանկյունից: Ու- սում-նասիրությունները ցույց են տալիս, որ երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսում-նառության հաջող ընթացքը (Ֆերել, 2012, Նունես, Սուարես, Ռոսարիո, Վալլեյո, Վալլե և Էպշտեյն, 2015): Ըստ Հոյի (2012) համապարփակ հետազոտության, որում քննության են առնվում աշակերտների առաջադիմությանը նպաստող պայմանները, մաթեմատիկայի և ընթերցանության գնահատա- կանները բարելավվում են, երբ ուսուցիչներն սկսում են վստահել ծնողներին և նրանց հետ այդ գործընթացում հարաբերություններ են ունենում: Միացյալ Նահանգներում անցկացվել է մեկ այլ ազգային երկարաժամկետ հետազոտություն՝ նվիրված միջնակարգ դպրոցում սովորող զարգաց- ման խանգարում-ներ ունեցող աշակերտների առաջադիմությանը: Պարզվել է, որ ավելի բարձր է այն երեխաների առաջադիմությունը, որոնց ընտանիքներն ակտիվ մասնակցություն են ունենում երեխայի ուսումնական գործընթացում:

Այդ համագործակցության դրական արդյունքներից են երեխայի բարձր գնահատականները, ընկերներ ունենալը և դպրոցն ավարտելուց հետո հաջողության հասնելու առավել մեծ հավանականությունը (Նյումեն, 2005): Թուրնբուլլը և ուրիշները (2015) հավաստիացնում են, որ ընտանիքների ներգրավումը կրթական գործընթացում նպաստում է երեխայի հմտությունների զարգացմանը, սովորելու մոտիվացիայի խթանմանը և դրական վարքի դրսևորմանը:

այն երեխաների առաջադիմությունը, որոնց ընտանիքներն ակտիվ մասնակցություն են ունենում երեխայի ուսում-նական գործընթացում:

Այդ համագործակցության դրական արդյունքներից են երեխայի բարձր գնահատականնե- րը, ընկերներ ունենալը և դպրոցն ավարտելուց հետո հաջողության հասնելու առավել մեծ հա- վանականությունը (Նյումեն, 2005): Թուրնբուլլը և ուրիշները (2015) հավաստիացնում են, որ ընտանիքների ներգրավումը կրթական գործընթացում նպաստում է երեխայի հմտությունների զարգացմանը, սովորելու մոտիվացիայի խթանմանը և դրական վարքի դրսևորմանը:

Ընտանիքի ներգրավումը կրթական գործընթացում տրամաբանական մեկնաբանություն և արդյունավետություն ունի: Այս գլխում քննարկվում է ընտանեկան կենտրոն մոտեցումը, ըն- տանիքի դերը երեխայի կրթության գործընթացում (Էպլեյ, Սամմերս և Թուրնբուլլ, 2010): Գլխում ներկայացվում է ընտանիքը՝ որպես ռեսուրս, ոչ թե իբրև խոչընդոտ դիտարկելուն միտված մշա- կութային և վարքագծային փոփոխությունների անհրաժեշտությունը: Քննարկվում են նաև մաս- նագիտական հաղորդակցման այն հմտություններն ու ռազմավարությունը, որոնք անհրաժեշտ են ընտանիքները երեխաների դպրոցական կյանքի ակտիվ մասնակիցները դարձնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծանոթանալով համընդհանուր ներառման մասին ՀՀ օրենքների և որոշումների հետ պարզ է դառնում, որ այս բնագավառում կատարվում են բազմաթիվ բարեփոխումներ, որոնց արդյունքներն ադեն իսկ շոշափելի են: Սակայն, այնուամենայնիվ, ներառական կրթությունը, լինելով կրթության համակարգի անբաժան մաս, դեռևս լիովին և բացարձակապես ձևավորված չէ Հայաստանում, այն գտնվում է կայացման,վերանայման, հստակեցման փուլում: Այն հանդիսանում է ժամանակակից մանկավարժության արդի հիմնախնդիրներից մեկը, որն իր առջև բավականին հարցեր ունի լուծելու: Ներառական կրթության, որպես մանկավարժական հիմնախնդիր լինելու պատճառներից մեկն էլ կայանում է նրանում, որ մասնագետները լիովին պատրաստ չեն աշխատելու այս համակարգում, ներառական կրթության խնդիրը մանկավարժների կողմից միանշանակ չի ընկալվում, միաժամանակ նշվում են ուսուցման այս ձևի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները ԿԱՊԿՈՒ երեխաների վրա: Այսինքն՝ խնդրի լուծումը ենթադրում է բազմակողմանի վերլուծություն և համալիր գործողությունների իրականացում: Խնդիրը պայմանավորվում է նաև նրանով, որ մեր հասարակությունը առաջին քայլերն է անում ԿԱՊԿՈՒ երեխաներին, որպես սովորական ընդունելու հարցերում: Սակայն եթե համեմատում ենք մի քանի տարվա անցած ճանապարհը ակնհայտ է դառնում, որ այսօր հայկական հասարակությունը, ելնելով մարդասիրությունից և հանդուրժողականությունից սկսել է փոքր ինչ այլ կերպ ընկալել այս երեխաներին, որն էլ իր հերթին ներառական կրթության ծրագրի արդյունավետության բավականին մեծ գրավական է: Այս համակարգի, ավելի արդյունավետ լինելու համար, այնուամենայնիվ կարելի է մի քանի առաջարկություն անել.

· կապ ստեղծել դպրոցների և հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների միջև

· ուսուցիչներին տալ հմտություններ, յուրաքանչյուր երեխայի ուսուցման ոճի, արտահայտման միջոցների, դասի մատուցման բազմազանության, տարբերակված ուսուցման վարման վերաբերյալ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատական զարգացման առանձնահատկությունները և ապահովելով անհատական մոտեցումը:

· հանրակրթական դպրոցները տեխնիկապես համապատասխանեցնել հաշմանդամ երեխաների կարիքներին,

· հարմարեցնել դպրոցի միջավայրը հաշմանդամ երեխաների կարիքներին

· դպրոցներում ստեղծել ներառական կրթության իրագործման համար անհրաժեշտ նյութա-տեխնիկական բազա՝ համապատասխան սարքավորումներով, գույքով և գրականությամբ

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բոլոր աշակերտների կրթական կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար պահանջվում է ինտենսիվ համագործակցություն: Այս համագործակցությունը մասամբ տեղի է ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսումնական պլանները մշակելիս: Այդ ընթացքում ուսուցիչները, նեղ մասնագետները, դպրոցների ղեկավարները և ծնողները երեխայի համար արդյունավետ պլան կազմելու նպատակով միավորում են իրենց ջանքերը

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ուսուցիչներից այլևս չի ակնկալվում ստանձնելու աշակերտների ուսուցման ամբողջ պատասխանատվությունը: Համատեղ դասավանդման առաջադրվող մոդելը հնարավորություն է տալիս հատուկ մանկավարժներին և ուսուցիչների օգնականներին աշխատելու ուսուցիչների հետ միասին՝ դասերն արդյունավետ պլանավորելու և անցկացնելու համար: Համատեղ դասավանդման ժամանակ մասնագետները կարող են աշխատել փոքր խմբերով, միասին վարել դասերը, աջակցություն տրամադրել առանձին երեխաների կամ հեշտությամբ անցնել մի դերից մյուսին: Համատեղ դասավանդումը ներառական կրթության համատեքստում հնարավոր է դարձնում աջակցության տրամադրումը բոլոր երեխաներին՝ թիմում ընդգրկված մասնագետների ուժեղ կողմերի առավելագույն օգտագործմամբ

Գրականության ցանկ

- Աբովյան Խ., (1940) Երկերի ժողովածու, Մաս II, Երևան, էջ 282 Մովսիսյան Ա., (1958)
- Գրառումներ հայկական դպրոցից և մանկավարժության պատմությունից (10-15 դարեր),
- Հարությունյան Մ. և ուր., Ներառական կրթության ռազմավարություն: Դասագիրք: .Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 2020, Արմգովեդպեդփաբ, Երևան
- Թադևոսյան Ս., Անհատական ուսուցման պլանի մշակման ուղեցույց-ձեռնարկ: Երևան: 2016,

(Clampa, 2014; Malone & Lepper, 1987; Mega, Ronconi & DeBeni, 2014):

- . https://www.youtube.com/watch?v=OxMmIGFhG9M